ԵՐԳԵՐ

(ՀԱՑՆԷ-էց)

ԱՐԾԻՒՆԱՆԻ

I

Գիշեր ցերեկ միայն դու ես
Ուշք ու միտքս գրրաւած,
Հեզ աչերով, մատաղ ժպտով
Սիրտս ու հոգիս կախարդած։

Ա՛խ, ինչպէս ես կը ցանկայի
Մենակ նստած քո կողքին՝
Ողջ գիշերներ քեզ իմ երգով
Պատմել սէրըս, իմ անգին։

Եւ կ՚ուզէի քո քնքուշիկ
Ձեռքը սեղմել շրթունքիս,
Եւ ջերմաջերմ իմ արցունքով
Թրջել նրան, նաղելիս։

Մոսկւա. 1889 Թ.

II

Դու մանուկ չքնաղ, եղեմ ծաղկալից,
Որքան քնքուշ ես, որքան սիրասուն,
Նայում եմ վերադ — և հոգիս նորից
Զգում է նոր կեանք, նոր երջանկութիւն։

Ա՛խ, ինչպէս սիրով այդ փոքրիկ գլխիդ
Ձեռքերս դարսած՝ ես ջերմ, սրտեռանդ
Աղօթք կ՚անէի, որ Տէրը քեզ միշտ
Պահպանէր այդպէս մաքուր, անարատ։

Մոսկվա. 1889 թ.

III

Որպէս երբեմն գիշերուայ ժամին
Լուսնի ջինջ շողքը դողում է ջրում,
Իսկ լուսինն ինքը երկրի երեսին
Հանգի՛ստ ու վսե՛մ յառաջ է սահում.

Այդպէս իմ առջև, և՛ դու նազելի,
Հանգիստ, սիգաճեմ քայլ էիր փոխում,
Եւ քո պատկերը չքնաղ, պաշտելի
Անգրադառնում էր սրտիս խորքերում...

Մոսկվա. 1889 թ.

IV

Մանուկ, մի՛ լինիր այդպէս անհամբեր,
Եւ ներքի՛ր, որ դու իմ նոր երգերում
Անվերջ լսում ես հին վշտի ձայներ
Եւ միայն անցեալ տանջանքս ես կարդում։

Սպասէր, հոգեակ. կը լռէ շուտով
Նախկին վշտերիս տխուր արձագանք,
Եւ սիրոս նորից քեզ ջերմ եռանդով
Կ'երգէ նոր գարուն, նոր սէր ու նոր կեանք։

Մոսկուա. 1889 թ.

V

LAZARUS

Թէ դու հարուստ ես—անբաւ գանձի տէր,
Բաղդը քեզ դարձեալ կը տայ լիուլի.
Իսկ թէ աղքատ ես—շատ քիչ փողի տէր,
Այդ քիչն էլ բաղդը քեզնից կը խլի։

Թէ մուրացկան ես—ամեն բանից զուրկ,
Աւելի լաւ չէ քընես յաւիտեան...
Այժմ նա միայն ունի իրաւունք
Աղատ ապրելու, ով ունէ մի բան։

1887 թ.